

կործանել սուրբ եկեղեցիիդ վրայ յարձա-
կողները:

Պահէ, ո՛վ Տէր, քու այս բանաւոր
հօտդ գազաններէ, սողուններէ, թռնաւոր
ձնիններէ, գլորումէ, ընկղմումէ, հրկիզու-
թենէ, ջրահեղձութենէ, սառնամանիքներէ,
աւազակներէ, խորշակէ, ուժգին հովերէ
ու ամէն վնասակար տարրերէ, քանզի բո-
լոր արարածները քու հրամանիդ կը հնա-
զանդին:

Օրհնէ՛, Տէր, ներկայ տարիս և անոր
պտուղները՝ անփորձ պահելով ամէն պա-
տահարներէ, և քու աջդ մեր վրայ թող
լինի տարւոյս սկիզբէն մինչև վախճանը:

Յոյց տո՛ւր, Տէր, օրուան շնորհը մար-
դոց և անասուններու, կենդանիներու և ան-
կենդաններու վրայ, ամպերու, օդին, բոյ-
սերու և տունկերու վրայ ու անվնաս պահէ
զանոնք ամէն տեսակ աղէտներէ ու փոր-
ձանքներէ, որոնք քու հրամանովդ կու
գան մեր վրայ:

Շնորհէ՛ որ սիրով ու արդարութեամբ
և խաղաղութեամբ վարենք մեր կեանքը և
ուղղափառ դաւանութեամբ փակենք մեր
վախճանը:

Յիշէ՛ նաև ննջեցեալները, որոնք ու-
ղիվ խոստովանութեամբ աւարտեցին իրենց
կեանքը. շնորհէ անոնց հանգիստ՝ արդարոց
կայանին մէջ, և ջնջէ՝ կամայ և ակամայ,
զիտութեամբ և անզիտութեամբ գործած
իրենց բոլոր յանցանքներուն մուրհակը:

Եւ քու հրարորոք գալստեանդ վերջին
օրը արժանացո՛ւր ամէնքս լուսեղէն ամ-
պերու վրայէն թռչիլ քու առջեւդ, Տէ՛ր,
և սուրբերուդ հետ վերին Սիոնի մէջ հան-
դիպելով քեզ՝ եռահիստեակ սրբասացու-
թիւնը երգել քեզ և Հօրդ և ամենասուրբ
Հոգւոյդ՝ անհատնում օրհնութեամբ. Բեզ՝
որ օրհնեալ, գովեալ, բարեբանեալ և բա-
րեհամբաւեալ և առաւելապէս փառաւոր-
եալ ես երկնաւորներէն և երկրաւորներէն՝
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

“ԴՈՒՔ ԷՔ ԼՈՅՍ ԱՇԽԱՐՀԻ”

Մատ. Ե. 14

Կը պատմուի թէ փարոսի մը վերակա-
ցուի և փոքրիկ լոյսի մը մէջ խօսակցու-
թիւն մը տեղի ունեցած է: Փոթորկալից
գիշեր մը փարոսի հսկիչը վառելով փոք-
րիկ լոյսը երբ կը պատրաստուի մեծ փա-
րոսի գազաթն ելլել, «Լո՛ւկ Կ'ուզես ինձմէ»,
կը հարցնէ լոյսը. «այնչափ պղտիկ եմ որ
ոչ ոք զիս չի տեսներ, տուած լոյսս ալ
չատ տկար է»:

«Մի՛ վախար, կը պատասխանէ հըս-
կիչը, այլ միայն յարտեւէ վառելի, մին-
չև որ վերջացնեմ գործը, զոր քեզ հետ
պէտք է կատարենք»: Եւ ինքը կ'ելլէ ու
լորպտոյտ երկար աստիճաններու գագա-
թը, լոյսը ձեռքը բռնած:

Վերջապէս կը հասնի գազաթն և այդ
տկար լոյսով կը վառէ զօրաւոր փարոսը,
որ իր ճառագայթները կը շրջէ մզոններ
անդին, կատաղած ծովու ամենի ալիքներով
ուռած կոհակներու վրայ, և շատ չոգենաւ-
ներ այդ գիշեր կ'ազատին ժայռերուն զար-
նուելու և իրար բախելու վտանգէն: Հա-
ւատարիմ փոքրիկ լոյսին պաշտօնը լմնցած
էր այդ բոպէին՝ երբ չոգենաւները ազա-
տեցան փորձանքէն. հսկիչը գիտէր զայդ:

Կ'ուզե՞ս, եթէ հարկը պահանջէ, ըլլալ
«փոքրիկ լոյս մը», որպէս զի Տէր Աստուած
քեզմէ օգուտ մը տեսնէ կրկին վառելու
համար փարոսները, որպէս զի անոնք կա-
րենան ազատել շատերը նաւաբեկութենէ:
Դուն չես գիտեր ի՞նչպէս, ի՞նչ կերպով,
բայց Փարոսի Հսկիչը գիտէ: Կ'ուզե՞ս այդ
գործը:

(Սիոն, 1927 Յունիս, էջ 171)

